ՀՏԴ : 050/070(=919.81)(56)+947.925

Doi:10.54503/0135-0536-2023.2-100

# ՊՈԼՍԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ «ՆԵՄԵՍԻՍ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1920–1922 թթ.)*

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Բանալի բառեր՝ պոլսահայ պարբերականներ, «Նեմեսիս» գործողություն, օսմանյան ռազմական դատարան, հայ վրիժառուներ, Հայոց ցեղասպանություն, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներ:

Նախաբան

*1919 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 30-ը Երևանում տեղի ունեցած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում որոշում է ընդունվում Հայոց ցեղասպանության կազմակերպիչների նկատմամբ իրականացնել «Նեմեսիս» պատժիչ գործողությունը[1]: Այդ ձեռնարկներն ունեցել են հասարակական մեծ հնչեղություն, որը ներկայացված է նաև 1920–1922 թթ. պոլսահայ պարբերականների էջերում:*

## Մեծ եղեռնի կազմակերպիչների սպանությունների անդրադարձը պոլսահայ օրաթերթերի էջերում

*Հայաստանի առաջին հանրապետության անկումը, նախկին Խորհրդային Հայաստանում ապրող «Նեմեսիս» գործողության մեջ ընդգրկված գործիչների նկատմամբ սկված հալածանքներն ու նրանց մի մասի պարտադրված արտագաղթն օտար երկրներ մեծապես խանգարում են «Նեմեսիսի» իրագործմանը: Այն մնում է անավարտ:*

*1920–1922 թթ. պոլսահայ բարձր վարկանիշ ունեցած կոնկրետ երեք օրաթերթերի՝ ՀՅԴ ոչ պաշտոնական օրգան «Ճակատամարտի»[2], ռամկավարների ոչ պաշտոնական խոսափող «Ժողովուրդի ձայնը. Ժամանակի», չեզոք պարբերական «Վերջին լուրի» նյութերի քննական վերլուծությունը վկայում է, որ այդ պարբերականների աշխատակիցներն ու ընթերցողների լսարանը*

---

* Ներկայացվել է 08. VI. 2023 թ., գրախոսվել է 11. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:

[1] Հայոց պատմություն. 2010, 233–234:

[2] «Ճակատամարտը» համարվում է 1909–1915 թթ. Կ. Պոլսում լույս տեսած ՀՅԴ Արևմտյան բյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի իրավահաջորդը, թեև հրատարակվել է արդեն որպես ՀՅԴ ոչ պաշտոնական մամուլի օրգան:

գրեթե անտարբերությամբ են կարդացել դավաճան Վահե Իհսանի[3] սպանության լուրը: Չկա որևէ արձագանք կամ հոդված դրա կապակցությամբ: Միայն «Ճակատամարտի» համարներից երկուսում՝ «Ընթացիկ կյանք» խորագրի ներքո, փոքրիկ լուրեր են տպագրվել այդ մասին, որոնցում դա չեն դիտարկել իբրև վրեժխնդրության արտահայտություն, այլ զուտ որպես ընթացիկ տեղեկատվություն է ներկայացվել, թեև այս ձեռնարկը[4] «Նեմեսիս» գործողության դրվագների շարքում էր[5]: Այդ անձնավորության սպանության հաջորդ օրը «Ճակատամարտը» գրում էր. «Երէկ առտու ժամը ութի ատենները Բերա, Թարլա Պաշի պողոտայէն անցած ժամանակ, անծանօթի մը կողմէ սպաննուած է Վահէ Իհսան անուն անձ մը: Սպաննիչը չէ ձերբակալուած»[6]: Թերթի հաջորդ համարում նույն թեմայի վերաբերյալ ծաղկաքաղ էր արված մայրաքաղաքի նաև թուրքական թերթերից[7]: Թուրք լրագրողներն առաջ էին քաշում այդ սպանության ընույթի վրեժխնդրական վարկածը, ինչը «Ճակատամարտը» ո՛չ հաստատում էր, ո՛չ՝ հերքում[8]: Թուրք լրագրողներից մեկը նշում էր, որ Վահե Եսայանի կամ Իհսանի սպանության՝ «վրէժխնդրական արարք մը ըլլալը կը հաստատուի անով, որ սպաննուածը գէշ համբաւ կը վայելէր պատերազմի շրջանին և իր պաշտօնն ու ազդեցութիւնը չարաչար գործածած էր, մեծ վնաս հասցնելով իր հայ հայրենակիցներուն»[9]: Թուրքական մեկ այլ թերթ կառավարության լրտես էր համարում Իհսանին, որը, իբրև այդպիսին, «նուազ համակրութիւն կը վայելէր»[10]:

Վերոնշյալ պոլսահայ պարբերականների էջերում Վահե Իհսանի սպանության լուրի հպանցիկ անդրադարձը և միևնույն ժամանակ Հայոց ցեղասպանության պատճառահետևանքային կապերի վերհանմանը նվիրված բազմաթիվ հրապարակումները կարծես ցույց էին տալիս, թե տվյալ պարագայում

---

[3] Դավաճան Վահե Իհսանին (Եսայանին) «Նեմեսիսի» շրջանակում 1920 թ. մարտի 27-ին Կ. Պոլսում սպանել է Արշավիր Շիրակյանը. տե՛ս «Նեմեսիս» գործողություն.– Հայկական հարց հանրագիտարան. 1996, 354–355:

[4] Մ ե լ ք ո ն յ ա ն. 2021:

[5] «Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 28, 30. III. 1920:

[6] «Ճակատամարտ», 28. III. 1920:

[7] «Ճակատամարտ», 30. III. 1920:

[8] «Ճակատամարտի» խմբագրակազմի այս կեցվածքը հասկանալի է, քանի որ վերջին տարիներին վերհանված արխիվային փաստաթղթերից և ուսումնասիրություններից պարզվել է՝ օրաթերթի խմբագրատունը «Նեմեսիսի» կազմակերպչական ընդհատակյա կենտրոնատեղիներից մեկն է եղել՝ Բոստոնի «Հայրենիք» պարբերականի խմբագրության հետ (Խ ա ն ո ւ մ յ ա ն. 2019, 67): Բնական է, որ Օսմանյան կայսրության մայրաքաղաքում տպագրվող «Ճակատամարտը» պետք է չափազանց զգույշ լիներ «Նեմեսիս» գործողությանն անդրադառնալիս, որպեսզի թուրքական հատուկ ծառայությունների թիրախում չհայտնվեր, և չբացահայտվեր բուն ծրագիրը:

[9] Հայոց պատմություն. 2010, 233:

[10] Հայոց պատմություն. 2010, 233:

*հայ հասարակությունը հասկանում էր, որ արևմտահայերի տեղահանությունն ու ջարդերը նախապես ծրագրված էին թուրքական իշխանությունների կողմից:*

*Այս առումով բոլորովին այլ էր օրաթերթերի վերաբերմունքը Սայիդ Հալիմի[11], Մեհմեդ Թալեաթի[12] ու Հայոց ցեղասպանության մնացած կազմակերպիչների[13] սպանությունների նկատմամբ: Այս կապակցությամբ կարևոր մի քանի հանգամանքի վրա պետք է ուշադրություն դարձնել:*

- *Թե՛ Վահե Իհսանի, թե՛ Սայիդ Հալիմի, թե՛ Մեհմեդ Թալեաթի սպանությունների մասին գրելիս կամ թուրքական ու արտասահմանյան մամուլի օրգաններից թարգմանաբար նյութեր տպագրելիս «Ճակատամարտը», «Ժողովուրդի ձայնը. Ժամանակը», «Վերջին լուրը», թեև արտահայտում էին զուտ իրենց խմբագրությունների կամ համակիրների կարծիքն ու մոտեցումները, բայց դրանք ներկայացնում էին որպես ողջ հայության տեսակետներ, քանի որ այդ վրիժառության ձեռնարկներն անմիջականորեն կապված էին Հայոց ցեղասպանության կազմակերպման, ծրագրման և իրագործման հետ:*
- *Պարբերականների աշխատակիցների մտքով, հավանաբար, չէր անցնում (բացառությամբ՝ «Ճակատամարտի»), որ այդ սպանությունները կատարվում էին «Նեմեսիս» գործողության շրջանակում, և ամենևին պատահական չէին ընտրված զոհերը:*
- *Երեք օրաթերթն էլ միակարծիք էին այն հարցում, որ Սայիդ Հալիմի և Մեհմեդ Թալեաթի սպանությունները կատարող անձինք անմեղ էին. նրանք ի կատար էին ածել 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո օսմանյան ռազմական դատարանի կողմից երիտթուրքական պարագլուխների համար կայացված մահվան դատավճիռները[14]: Համաձայն օսմանյան ռազմական դատարանի 1919 թ. հուլիսի 5-ի դատավճռի՝ «Միութ-*

---

[11] *Սայիդ Հալիմը 1913–1918 թթ. Օսմանյան կայսրության վարչապետն էր, «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղարը (Հայկական հարց հանրագիտարան. 1996, 397):*

[12] *Մեհմեդ Թալեաթը 1918 թ. եղել է Օսմանյան կայսրության վարչապետն ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի նախագահը, մինչ այդ ներքին գործերի, փոստի ու հեռագրության նախարարն էր, Հայոց ցեղասպանության կազմակերպիչների եռյակում էր Իսմայիլ Էնվերի ու Ահմեդ Ջեմալի հետ (Հայկական հարց հանրագիտարան. 1996, 137):*

[13] *Արամ Երկանյանը Թիֆլիսում 1920 թ. հունիսի 19-ին գնդակահարում է Ֆաթալի խան Խոյսկուն, իսկ 1921 թ. հուլիսի 19-ին Միսաք Թորլաքյանը Կ. Պոլսում սպանում է Բեյբուդ խան Ջիվանշիրին: Նրանցից առաջինը 1918 թ. սեպտեմբերին Բաքվում և 1920 թ. մարտին Շուշիում հայերի կոտորածների կազմակերպիչն էր, իսկ երկրորդը Բաքվի հիշյալ ջարդերի ծրագրողներից էր (Հայոց պատմություն. 2010, 234–235): Վրեժխնդրության այս ձեռնարկների մասին պոլսահայ պարբերականների էջերում հիմնավոր անդրադարձի չենք հանդիպել:*

[14] *Թուրքիայի Հանրապետության պատմություն. 2018, 16:*

*յուն և առաջադիմություն» կուսակցության և թուրքական իշխանության պարագլուխներ Թալեաթը, Էնվերը, Նազիմը, Ջեմալը, Բեհաէդդին Շաքիրը և ուրիշներ մեղադրվեցին Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու, հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը կազմակերպելու մեջ և հեռակա կարգով դատապարտվեցին մահվան*[15]:

*Ուշադրություն է գրավում այն, որ Վահե Իհսանի սպանության մասին լուրերում վերոհիշյալ պարբերականները չէին անդրադառնում նրան գնդակահարողի ազգային պատկանելության հարցին, այնինչ Սայիդ Հալիմի և Մեհմեդ Թալեաթի սպանությունների դեպքում արդեն պարբերաբար շեշտվում էր նրանց սպանողների հայ լինելու հանգամանքը:*

*1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Թալեաթ փաշայի գնդակահարությունն արդեն բացում է գրեթե բոլոր խաղաքարտերը, քանի որ նրան սպանող Սողոմոն Թեհլիրյանը ձերբակալվում է և դատարանի կողմից արդարացվում: «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթի վերնագիրն էլ շատ խոսուն է՝ «Վրիժառուն»*[16]*: Թղթակցության մեջ նշվում էր, որ աշխարհը սահմռկեցնող սարսափազդու ոճիրը՝ հայոց Մեծ եղեռնը, անպատիժ չէր մնացել. «Թալէաթ ոչ ևս է: Ան, որ հազարաւոր անմեղներու արիւնը թափելով, չէր յափրացած և իր թաքստոցին մէջ նորանոր դժոխային ծրագիրներ յղանալու ետեւէ էր, ինկաւ վրիժառու հայ գնդակին տակ»*[17]*: Լրագրողը պնդում էր, որ Թեհլիրյանը լուծել էր հազարավոր անթաղ մնացած իր հայրենակիցների սպանության վրեժը: Մեջբերում էր հարցաքննության ժամանակ նրա ասած խոսքերն՝ ուղղված հարցաքննող ոստիկաններին. «Ես կատարեցի իմ պարտականութիւնը, ինծի համար միեւնոյնն է, եթէ նոյնիսկ ասկէ յետոյ գլուխս ալ կտրելու ըլլաք»*[18]*:*

*«Վերջին լուր» պարբերականի լրագրող Հովհաննես Ասպետը գրում էր. «Երբ իմացա վայրագ տիքթաթորին սպանութիւնը, անմիջապէս խորհեցայ, որ շանթահարիչ ձեռքը միմիայն վշտահար հայու մը վրէժխնդիր ձեռքը կրնար ըլլալ»*[19]*: Նա վստահեցնում էր ընթերցողներին, որ Թալեաթի ոճրակից ընկերները շարունակ պետք է հետ նայեին՝ «տեսնելու համար մօտենալը վերահաս Արդարութեան սուրին, որ մութին մէջ կը շողշողայ»*[20]*: Հեղինակը չի անդրադարձել Սողոմոն Թեհլիրյանի կյանքին, քանի որ գտնում էր, թե այդ արդար պատժիչ ձեռնարկը ուրիշ հայեր նույնպես երազում էին ի կատար ածել: Նա վկայակոչում էր իր ընկերոջ հետևյալ խոսքերը. «Գաւառացի բարեկամ մը*

[15] *Հայկական հարց հանրագիտարան. 1996, 354–355:*
[16] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 23. III. 1921:*
[17] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 23. III. 1921:*
[18] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 23. III. 1921:*
[19] *«Վերջին լուր», 23. III. 1921:*
[20] *«Վերջին լուր», 23. III. 1921:*

*ունիմ, որուն բոլոր ազգականները տարագրուած ու մեռած են, միտքը դրած է Թալէաթը սպաննել, և կընէ, որովհետև վիշտէն գրեթէ խենդի պէս եղած է»[21]:*

*«Ճակատամարտ» օրաթերթը 1921 թ. մարտի 18-ի համարում տպագրել է Բեռլինից ստացած երկու հեռագիր, որոնցում մանրամասներ էին հաղորդվում Թալեաթի սպանության մասին[22]: «Իր սպաննիչը հայ ուսանող մըն է Սողոմոն Թէյլիրեան անունով, 24 տարեկան ... Սպաննիչը չարաչար կերպով խոշտանգուեցաւ ամբոխին կողմէ: Համառօտակի հարցաքննուելով՝ յայտարարեց.— «Թալէաթ փաշան սպաննեցի՝ վրէժը առնելու համար իմ ծնողքիս, որ սպաննուեցան իր հրամանովը ... Պերլին եկած էի զայն սպաննելու վճռական դիտաւորութեամբ»»[23], — կարդում ենք դրանցից մեկում: Նույն համարում «Օրը օրին» խորագրի ներքո Երվանդ Օտյանը գրում էր, որ Թալեաթի կամ Էնվերի սպանությունները «վրէժխնդրական որ և է յագեցում չեն տար մեզի, գիտնալով հանդերձ, որ այդ երկու չարագործները պատասխանատուութեան մեծ բաժին մը ունեցած են հայաջինջ սարսափներուն մէջ ... Մէկ միլիոնէ աւելի կիներու, մանուկներու և ծերերու բռնաբարումը, բնաջնջումը և սպանութիւնը, ամբողջ ժողովուրդի մը թալանն ու կողոպուտը վերագրել մէկ քանի տասնեակ արիւնարբու դիւահարներու, և զանոնք պատժելով՝ արդարութիւնը գործադրուած նկատելը առնուազն ծիծաղելի պիտի ըլլար, և բնաւ պիտի չհամապատասխանէր գործուած ահաւոր ոճիրին մեծութեան»[24]:*

*«Ճակատամարտը» համամիտ էր ֆրանսիացի լրագրող Օգյուստ Կովեի կարծիքի հետ, որը նա ներկայացրել էր ֆրանսիական թերթերից մեկում: Այն թարգմանաբար տպագրվել էր «Ճակատամարտ»-ում: Հեղինակը հեշտ մահ էր համարում Թալեաթի մահկանացուն կնքելը, թեև գտնում էր՝ դա քիչ էր նրա համար: Նա դա պատճառաբանում էր հետևյալ կերպ. «Թալէաթը մէկուկէս միլիոն հայերու բնաջնջման հրաման տուողն է: Անտարակոյս, իբրև հաւանող և մեղսակից ունեցած է Իթթիհատի կառավարութեան և քոմիթէին միւս անդամները և գերման դեսպանատունը: Առանձին չէր գործեր ... Որոշած էր ջնջել հայկական խնդիրը կայսրութեան մէջէն, հայերը բնաջնջելով ... Ան անձնատուր եղաւ համիսլամական և թուրանական քաղաքականութեան»[25]:*

*Պոլսահայ վերոհիշյալ պարբերականներն իրենց հրապարակումների մեջ տեղ են հատկացրել նաև Սողոմոն Թեհլիրյանի դատավարությանը[26]: Դրանցում հավատ կար եվրոպական արդարադատության նկատմամբ: Պարզ է, որ*

---

[21] «Վերջին լուր», 23. III. 1921:
[22] «Ճակատամարտ», 18. III. 1921:
[23] «Ճակատամարտ», 18. III. 1921:
[24] «Ճակատամարտ», 18. III. 1921:
[25] «Ճակատամարտ», 23. III. 1921:
[26] «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը, թեև Սողոմոն Թեհլիրյանին հերոս էր համարել («Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 13. VI. 1921), բայց թռուցիկ էր անդրադարձել նրա դատավարությանը:

*Թեհլիրյանի արդարացումը դատարանի կողմից և 1921 թ. հունիսի 4-ին նրա ազատ արձակումը ցնծության առիթ էին ոչ միայն այս թերթերի խմբագրությունների աշխատակիցների, այլև աշխարհասփյուռ հայության համար: Տեղին է մեջբերել հետևյալ հատվածը «Վերջին լուր» օրաթերթի հոդվածներից մեկից. «Մենք կը սպասէինք այս վճիռին, քանի որ ... Թուրքիա գտնուող բազմաթիւ գերման սպաներ ու քաղաքացիներ աչքովնին տեսած էին անլուր խժդժութիւնները, և երբ զոհերէն մին, հրաշէնը բարձրացնելով, իր կորսուած ընտանիքին վրէժը լուծեց ամբողջ ազգի մը ջարդարարէն, Պէրլինի դատաւորները չէին կրնար արդարութենէ շեղիլ, դատապարտելով Աստուծոյ կողմէ զինուած այդ մարդը, որ կուգար միջոցն ըլլալ թէ՛ մարդկութեան և թէ՛ իր կառավարութեան կողմէ վճռուած մահապարտի մը պատիժին գործադրութեան»[27]: Նշվում էր, որ Թալեաթը, թեև «մարդկութեան առջեւ արդէն դատապարտեալ մըն էր, իբր հայոց մեծագոյն ոճրագործներէն մին»[28], բայց նա նաև մահվան էր դատապարտվել Օսմանյան կայսրության դատարանի կողմից:*

*«Ճակատամարտ» օրաթերթում Սողոմոն Թեհլիրյանի դատավարության մասին առաջին թղթակցություններից մեկում նույնպես մեջբերել էին քրեական այդ գործով ընդհանուր դատախազի խոսքերը, թե «նոր թուրք կառավարութեան կողմէ Թալէաթ մահուան դատապարտուած էր»[29]: Տպագրել էին նաև դատավարության սղագրությունից կարևոր հատվածներ: Դրանց մեջ էր մասնավորապես Թեհլիրյանի պատասխանն այն հարցին, թե չգիտե՞ր, որ գերմանական օրենքով արգելված է մարդասպանությունը: Նա իրեն մեղավոր չէր համարել. «Ես մարդասպան մը չեմ»[30]: Իսկ հայկական մամուլն ու հայ ժողովուրդը նրան առ այսօր հերոս է համարում, հերոս, ում նմանների շնորհիվ հայությունը գլխահակ չի կանգնում իրեն հայրենիքի մեծ մասից ժամանակավորապես զրկած, իր բազմահազար ազգակիցներին կոտորած թուրք հանրույթի առաջ:*

## Պարբերականների անդրադարձը «Նեմեսիսի» ձեռնարկների մասին թուրքական մամուլի արձագանքներին (1921–1922 թթ.)

*«Նեմեսիս» գործողության մեջ ընդգրկված անվեհեր վրիժառու Արշավիր Շիրակյանը, ինչպես նշվեց, 1920 թ. մարտի 27-ին Կ. Պոլսում Վահե Իհսանին մահապատժի ենթարկելուց հետո 1921 թ. դեկտեմբերի 5-ին գնդակահարում է Հռոմում թաքնվող Սայիդ Հալիմ փաշային: «Վերջին լուրը» հակիրճ ներկայացնելով թուրքական թերթերի տեսակետներն այս դեպքի առիթով նաև իր կարծիքն էր հայտնում իշխանությունների հակահայ քաղաքակա-*

[27] *«Վերջին լուր», 06. VI. 1921:*
[28] *«Վերջին լուր», 06. VI. 1921:*
[29] *«Ճակատամարտ», 05. VI. 1921:*
[30] *«Ճակատամարտ», 05. VI. 1921:*

նության մասին[31]: Թուրքական թերթերից մեկը գրում էր. «Հալիմ փաշայի սպանութեամբ մէկ տարուան մէջ երկու եպարքոս վրէժխնդրութեան զոհ կ'երթան: Նախկին եպարքոս Թալէաթ փաշա ալ Պերլինի մէջ Թէհլիրեանի կողմէ նահատակուեցաւ, և գերման երդուեալները անպարտ արձակեցին զայն ... Հայ մըն է սպաննիչը»[32]: Մեկ այլ թուրքական պարբերականից թարգմանված թղթակցության մեջ հայ վրիժառուներին մեղադրում էին արևմտահայերի տարագրությանը և ջարդերին իբրև թե անմասն մնացած Սայիդ Հալիմի սպանության համար[33]: Սպանված նախկին վարչապետի որդին՝ Հալիմ Սայիդը, թուրքական մամուլին հայտնել էր. «Անկասկած ոճրագործը հայ քոմիթէնեռուն մէկ գործիքն է»[34]:

«Վերջին լուրն» այսպես էր դրանց արձագանքում. «Մենք ճանճրացանք պատասխանելէ թուրք թերթերու հակահայ հրատարակութեանց, որոնք կը թոյլատրուին զարմանալի մտայնութեամբ մը ... Ի՛նչպէս, այսքան աղէտներէ ետք, թուրք թերթերը կը համարձակին տակաւին պաշտպանել և արդարացնել տեղահանութեան և հետեւաբար ջարդի քաղաքականութիւնը»[35]:

Իր հերթին «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը, թարգմանաբար տպագրելով մայրաքաղաքի թուրքական թերթերի արձագանքը Սայիդ Հալիմի սպանությանը, առանց մեկնաբանության ներկայացնում էր դրանց տեսակետն առ այն, որ այդ ձեռնարկը «Հայ գաղտնի ընկերութեան մը անդամներուն գործն է»[36]: Թուրքական թերթերը մտածում էին, որ «Էնվէր և Ճէմալ փաշաներն ալ այդ կերպով պիտի սպաննուին, ինչ-որ այդպիսի ընկերութեան մը գոյութիւնը իրապէս դապացուցանէ»[37]:

«Ճակատամարտը» ներկայացրել է թուրքական շրջանակներում շրջանառվող «սև ցանկի» ոչ պաշտոնական վարկածին, որն արտահայտված էր թուրքական մամուլում մասնավորապես 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արշավիր Շիրակյանի և Արամ Երկանյանի կողմից Ջեմալ Ազմիի ու Բեհաէդդին Շաքիրի սպանություններից հետո: Թարգմանաբար տպագրված այդ թղթակցության մեջ նշվում էր. «Այս ոճիրներուն շարունակութիւնը և յաջորդականութիւնը այլևս ոչ մէկ կասկած կը թողուն, թէ կազմակերպուած և կանոնաւոր ծրագրով մարմին մը գոյութիւն ունի: Սախտ փաշայի սպանութենէն ետք «Պոսֆոր» խօսած էր սեւ ցանկի մը մասին, որուն մէջ յիշուած էին նաեւ Պէհաէտտին Շաքիր և Ճէմալ Ազմի պէյերու անունները»[38]: Առաջարկվում էր նաև ամեն կերպ նպաստել թուրքական պետության անկախությանը և անձեռնմխելիությանը, որպեսզի կարողանային դեմն առնել սպանված նախկին

[31] «Վերջին լուր», 10. XII. 1921:
[32] «Վերջին լուր», 10. XII. 1921:
[33] «Վերջին լուր», 10. XII. 1921:
[34] «Վերջին լուր», 27. XII. 1921:
[35] «Վերջին լուր», 10. XII. 1921:
[36] «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 08. XII. 1921:
[37] «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 08. XII. 1921:
[38] «Ճակատամարտ», 21. IV. 1922:

*«անմեղ»[39] բարձրաստիճան պաշտոնյաների դեմ իրականացված «հանցագործությունները»[40]:*

*«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը վերոհիշյալ սպանությունների առիթով նույնպես ներկայացնում էր թուրքական մամուլի արձագանքը, որտեղ Ջեմալ Ազմիին և մյուս սպանվածներին համարում էին նահատակներ, հայրենիքին ծառայած նվիրյալներ ու անմեղ զոհեր[41]: Ջեմալ Ազմիի և Բեհաէդդին Շաքիրի սպանությունները կատարած երկու անձանց, որոնք խույս էին տվել ոստիկանների հետապնդումից, հայ էին համարում թե՛ թուրքական թերթերը, թե՛ Բեռլինի ոստիկանությունը: Հետաքրքիրն այն է, որ ակամա ընդունում էին սպանվածների մեղավոր լինելը հայության առջև, գրելով, թե նրանք իբրև թե խաղաղության վերջնական պայմանագրի կնքվելուց հետո պետք է վերադառնային Կ. Պոլիս՝ «թուրք արդար դատարանի մը առջեւ տալու համար պատերազմի ընթացքին իրենց գործունէութեան հաշիւը»[42]:*

## Պարբերականների ավելի զգուշավոր ընթացքը երիտթուրք պարագլուխների սպանություններին անդրադառնալիս (1922 թ. կեսեր)

*Խնդրո առարկա ժամանակահատվածում աշխարհաքաղաքական նոր հանգամանքներն էին ստիպում աշխարհասփյուռ հայությանը, այդ թվում՝ Թուրքիայում դեռևս մնացած հայերին, ավելի զգուշավոր լինել իրենց քաղաքական պահանջների մեջ: Թվարկենք այդ պատճառներից հիմնականները. քեմալականների վերջնական հաղթանակը երկրում, Հայաստանի խորհրդայնացումն ու խորհրդային կայսերապետության կայացումը, Հայկական հարցի լուծման հետ կապվող հույսերի թուլացումը:*

*Բնական էր այն ինքնապաշտպանական մղումը, որով պոլսահայ վերոնշյալ պարբերականները գրում էին 1922 թ. հուլիսի 25-ին Թիֆլիսում Ստեփան Ծաղիկյանի, Պետրոս Տեր-Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի կողմից[43] «Նեմեսիսի» թիրախներից՝ Ահմեդ Ջեմալի[44] սպանության մասին: Պոլսահայ երեք օրաթերթն էլ դա վերագրում էին ոչ թե հայ վրիժառուների, այլ խորհրդային իշխանությունների կողմից ուղարկված մարդասպանների: Այդ ժամանակահատվածում, ինչպես վկայում էին պարբերականների հրապարակումները, խորհրդային իշխանությունները պայքարում էին համիսլամական ընդհանուր ընդվզման դեմ, և այդ ծիրում նաև Էնվեր ու Ջեմալ փաշաների գործունեությունն էր նրանց անհանգստացնում: Ահա թե ինչ էր թուրքական թերթերից*

[39] *«Ճակատամարտ», 21. IV. 1922:*
[40] *«Ճակատամարտ», 21. IV. 1922:*
[41] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 29. IV. 1922:*
[42] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 29. IV. 1922:*
[43] *Հ ա կ ո բ յ ա ն. 2010, 236:*
[44] *Ահմեդ Ջեմալը եղել է Օսմանյան կայսրության ծովային նախարար և երիտթուրքական իշխող եռյակի անդամ՝ Թալեաթ ու Էնվեր փաշաների հետ (Հայկական հարց հանրագիտարան. 1996, 382):*

*թարգմանաբար արտատպել «Վերջին լուրը». «Շատ կարելի է, որ Ճէմալ սպաննուած ըլլայ Իսլամական միութեան թշնամի քոմիթէի անդամի մը կողմէ: Կը թուի, թէ այդ քոմիթէն շատ կը վախնար, որ Ճէմալ Աֆղանիսթանի մէջ կը խաղայ այն դերը, զոր կը խաղայ Էնվէր Պուխարայի մէջ: Եթէ այս լուրը ճիշդ է, սպաննիչին անձը բնաւ կարևորութիւն չունի: Այս պարագային անիկա Սովիէթներու մէկ գործիքն է միայն»[45]:*

*Գրեթե նման եզրակացությամբ նյութ կար «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթում[46]: «Ճակատամարտը» ևս համակարծիք էր. «Կըսուի, թէ Սովիէթներու կողմէ մասնաւոր մարմին մը խիստ կերպով կը հետապնդէ համաթուրանականութեան առաջնորդները»[47]: Պարբերականը տպագրել էր նաև թուրքական թերթերի կարծիքներն այդ սպանության վերաբերյալ: Ըստ թուրք լրագրողների՝ հայերն էին վրեժ լուծել Ահմեդ Ջեմալից. «Գալով հայերէն թերթերուն, անոնք աւելի շատ կը զբաղին ոճրագործով և սպանութիւնը կը վերագրեն պոլշեւիկներուն: Բացայայտ է, թէ ասիկա որքան անիմաստ է ... Նկատելով, որ Իթթիհատի ղեկավարները մէկիկ-մէկիկ սպաննուած են հայերու կողմէ, կարելի է վճռել, որ Ճէմալ փաշա ևս զոհ եղած է հայերու ոխակալութեան և վրէժին»[48]:*

*Ահմեդ Ջեմալի սպանության մասին բավական հետաքրքիր էր «Վերջին լուր» օրաթերթի թղթակցություններից մեկի վերնագիրը՝ «Դաշնակցականներու ձերբակալում և Հայաստանի ցավակցությունը»[49]: Այս թղթակցության մեջ կարդում ենք, որ ցավակցելու նպատակով Թուրքիայի դեսպանատուն էր գնացել Ալեքսանդր Մյասնիկյանը, իսկ Խորհրդային Հայաստանի «արտաքին գործավար Մռավեան Արեւելեան ճակատի հրամանատարին ուղղած հեռագրով մը իր կառավարութեան ցաւակցութիւնը յայտնած է Ջէմալ փաշայի մահափորձին առթիւ»[50]: Նրանք նաև հայտնել էին, որ խիստ միջոցներ էին կիրառում՝ ոճրագործներին հայտնաբերելու և պատժելու համար՝ արդեն ձերբակալելով բազմաթիվ հայերի, այդ թվում՝ դաշնակցականների[51]:*

*«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթում թուրքական մամուլից թարգմանաբար մեջբերված հատվածներում բացահայտ սպառնալիք կար՝ ուղղված այդ սև շարքի դեմ շարունակվող ձեռնարկների հեղինակ հայ գաղափարական խմբակի անդամների և հանձինս նրանց՝ հայ ժողովրդի հասցեին: Դրանցից մեկում կարդում ենք. «Այս մահափորձերը նոր խմորումներ, նոր ջղաձգումիններ, նոր պայքարներ պիտի հրաւիրեն ... Այսպիսի քաղաքական*

---

[45] «Վերջին լուր», 27. VII. 1922:
[46] «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 28. VII. 1922:
[47] «Ճակատամարտ», 27. VII. 1922:
[48] «Ճակատամարտ», 29. VII. 1922:
[49] «Վերջին լուր», 07. VIII. 1922:
[50] «Վերջին լուր», 07. VIII. 1922:
[51] «Վերջին լուր», 07. VIII. 1922:

*ու ցեղային դէպքերու ուրիշ մէկ երեւոյթն ալ պէտք է նկատողութենէ չհեռացնել. տրամաբանական է, որ ամէն գործ իր հակազդեցութիւնը կ'ունենայ: Հետեւաբար վախ կայ, որ Պաքուի կամ Պերլինի մէջ մարդ սպաննողներուն պատիժը ուրիշ անմեղներ կրեն»[52]: Թուրք լրագրողները պահանջում էին, որ օրենքի առաջ պատասխան տային թուրք պետական ու կուսակցական գործիչներին սպանող հայերը՝ մոռանալով, որ միլիոնից ավելի հայ էր դաժանաբար սպանվել, հազարավորներն էլ բռնի տեղահանվել էին հայրենի երկրից, հայրենազրկվել էին ու անվերադարձ վտարվել հարազատ եզերքից՝ հայոց հայրենիքի տարածքներում թուրքական պետության պահպանման մոլուցքին և մարդկության դեմ ուղղված ցեղասպանության հանցագործությանը զոհ գնալով:*

## Եզրակացություն

*Ամփոփելով՝ կարող ենք փաստել.*

- *թեև «Նեմեսիս» գործողությունը մնաց անավարտ, բայց Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատուների սպանությունները կարծես վերահաստատեցին հայ ժողովրդի հանդեպ գործված հանցագործության կազմակերպիչների նկատմամբ արդար դատի անհրաժեշտությունը:*
- *Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում հրատարակված ռամկավարների ոչ պաշտոնական գաղափարախոս «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», չեզոք «Վերջին լուր» և ՀՅԴ ոչ պաշտոնական մամուլի օրգան «Ճակատամարտ» օրաթերթերն անդրադարձել են «Նեմեսիս» գործողության գրեթե բոլոր առանցքային ձեռնարկներին՝ հիմնականում լուրի և թղթակցության ժանրերի միջոցով: Զեն նշել, թե ինչ կառույցի նախաձեռնությամբ են դրանք կյանքի կոչվել, քանի որ, բացի վերջին պարբերականից, մյուսները հնարավոր է, որ չգիտեին բուն կազմակերպիչ կառույցի անունը:*
- *Խնդրո առարկա թերթերն այդ ձեռնարկները համարել են ոչ թե մարդասպանություն, այլ հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչների արդար պատիժ, որի համար հայ վրիժառուները չպետք է ենթարկվեն պատասխանատվության օրենքի առաջ, քանզի նրանք, վրեժից բացի, իրագործել են օսմանյան ռազմական դատարանի կողմից այդ մարդասպանների համար ընդունված մահապատժի որոշումները: Պարբերականների հրապարակումները վկայում են, որ հենց նման կերպ նաև հայ հանրությունն էր ընկալել Թալեաթի ու նրա գործընկերների սպանությունները:*
- *Պարբերականների նյութերում որպես հերոս են ներկայացվել Թալեաթի և մյուսների մահվան դատավճիռներն իրականացրած հայորդիները, որոնք ոչ միայն անձնական վրեժ են լուծել նրանցից, այլև կարծես դարձել են հայրենա-*

[52] *«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», 27. VII. 1922:*

*զրկված ու ցեղասպանված մի ողջ ժողովրդի օրհնությունն ստացած անձինք՝ հայության դահիճների հանդեպ հավաքական պատժիչ գործողությունը կատարելու համար:*

• *«Նեմեսիս» գործողությունն իր հնչեղությամբ արդիական է նաև այսօր: Մենք տեսնում ենք, թե թուրքական իշխանություններն որքան են մտահոգված այդ գործողությունները կատարած հայորդիներին նվիրված և Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում տեղադրված հուշակոթողի հանդեպ հայ հասարակության ցուցաբերած վերաբերմունքից ու աշխարհասփյուռ հայության ոգևորությամբ լեցուն արձագանքից: «Պաշտոնական Անկարան պահանջում է ապամոնտաժել Երևանում տեղադրված «Նեմեսիս» գործողության մասնակիցների հիշատակին նվիրված հուշարձանը»*[53]*,–* «Sputnik *Ադրբեջան»-ի հաղորդմամբ՝ այս մասին հայտարարել էր Թուրքիայի արդեն նախկին արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուն թուրքական հեռուստաալիքներից մեկի եթերում: Թուրքիայի Հանրապետության առաջին դեմքերի մակարդակով հնչեցված չհիմնավորված մեղադրանքներն այդ հուշարձանը տեղադրելու կապակցությամբ առ ոչինչ են հայ քաջորդիների կատարած ձեռնարկների առումով: Մինչ օրս թուրք պաշտոնյաները այն հորինված տեսակետներն են տարածում, որ հայերն իբրև թե դավաճան և վախկոտ են, որ իրենք նրանց կարող են ոչխարի պես մորթել, գերեվարել, տեղահանել ու վտարել հայրենի երկրից, քանզի դիմադրության չեն հանդիպելու: Այդ կեղծ պնդումները, սակայն, հօդս են ցնդում թեկուզ միայն «Նեմեսիս» գործողության փաստը հիշատակելով:*

**Մարիամ Հովսեփյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ և հասարակական-քաղաքական մտքի ու մամուլի պատմություն: Հեղինակ է 4 գրքի, մեթոդական 1 ձեռնարկի և ավելի քան 50 հոդվածի:** mariamhovsepian@mail.ru

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անկարան պահանջում է ապամոնտաժել «Նեմեսիս»-ին նվիրված հուշարձանը Երևանում. – https://armeniasputnik.am/20230508/ankaran-pahanjum-e-apamvon

[53] *Անկարան պահանջում է ապամոնտաժել «Նեմեսիս»-ին նվիրված հուշարձանը Երևանում.–* https://armeniasputnik.am/20230508/ankaran-pahanjum-e-apamvontazhel-nemesisin-nvirvats-hushardzany-erevanum-59319275.html *(դիտում՝ 05. II. 2023):*

tazhel-nemesisin-nvirvats-hushardzany-erevanum-59319275.html (դիտում 05. II. 2023):

Թուրքիայի Հանրապետության պատմություն. 2018, Երևան, «ՎՄՎ-պրինտ», 396 էջ:

«Ժողովուրդի ձայնը. ժամանակ» (Կ. Պոլիս), 1921, 1922:

Խանումյան Գ. 2019, Սողոմոն Թեհլիրյանը և «Նեմեսիս» գործողությունը. – «Վէմ» (Երևան), թիւ 4, էջ 67–84:

Հակոբյան Ա. 2010, Հայկական «Նեմեսիսը» գործողության մեջ. – Հայոց պատմություն, հ. 4, գիրք 1, Երևան, «Զանգակ-97», էջ 231 –237:

Հայկական հարց. հանրագիտարան. 1996, Երևան, «Հակոբ Մեղապարտ», 528 էջ:

«Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 1920, 1922:

Մելքոնյան Ա. Դավաճանները հայոց պատմության մեջ. – «Հորիզոն» (Կանադա), 11. I. 2021:

«Նեմեսիս» գործողություն. – Հայկական հարց. հանրագիտարան. 1996, էջ 354–355:

«Վերջին լուր» (Կ. Պոլիս), 1921, 1922:

## АРМЯНСКИЕ ГАЗЕТЫ КОНСТАНТИНОПОЛЯ ОБ ОПЕРАЦИИ «НЕМЕСИС» (1920–1922 гг.)

МАРИАМ ОВСЕПЯН

Р е з ю м е

*Ключевые слова: армянские газеты Константинополя, операция «Немесис», османский военный суд, армянские мстители, Геноцид армян, организаторы Геноцида армян.*

На проходившем в Ереване 27 сентября – 30 октября 1919 г. 9-м Общем собрании АРФ Дашнакцутюн было принято решение о проведении карательной операции «Немесис» против организаторов Геноцида армян. Эти акты имели большое общественное звучание, что нашло отражение и на страницах константинопольских армянских периодических изданий «Жоговурды дзайн: Жаманак», «Верчин лур» и «Чакатамарт» в 1920–1922 гг. Газеты считали эти акты справедливым наказанием организаторов Геноцида армян, поскольку армянские мстители также привели в исполнение принятые после заключения 30 октября 1918 г. Мудросского перемирия османским военным судом смертные приговоры в отношении главарей младотурок. Согласно приговору от 5 июля 1919 г. главари партии «Еди-

нение и прогресс» и представители турецкой власти Талаат, Энвер, Назим, Джемаль, Бехаэддин Шакир и другие были обвинены в вовлечении Турции в войну, депортации армян, организации геноцида и заочно приговорены к смертной казни. Карательные акты были совершены и в отношении предателей-армян. Операция «Немесис» осталась незавершенной.

Константинопольские армянские газеты представили как героев членов «Немесис», приведших в исполнение смертные приговоры организаторов и пособников Геноцида армян.

*Мариам Овсепян – к. филол. н., старший научный сотрудник отдела истории армянской периодики и общественной мысли Института истории НАН РА. Научные интересы: история армянской общественно-политической мысли и периодической печати. Автор 4 книг, 1 методического пособия и более 50 статей. mariamhovsepian@mail.ru*

## ARMENIAN NEWSPAPERS OF CONSTANTINOPLE ON "NEMESIS" OPERATION (1920–1922)

MARIAM HOVSEPYAN

S u m m a r y

*Keywords: Armenian newspapers of Constantinople, "Nemesis" operation, Ottoman military court, Armenian avengers, Armenian Genocide, organizers of the Armenian Genocide.*

At the 9th General Meeting of the ARF - Dashnaktsutyun, held in Yerevan on September 27-October 30, 1919, a decision was made to conduct a punitive operation "Nemesis" against the organizers of the Armenian Genocide. These acts had a great public response, which was reflected on the pages of the Constantinople Armenian periodicals "Zhoghovurdy dzayn, Zhamanak", "Verjin lur", and "Chakatamart" in 1920-1922. The newspapers considered these acts a just punishment for the organizers of the Armenian Genocide, as the Armenian avengers carried out the death sentences against the leaders of the Young Turks, adopted by the Ottoman military court, after the conclusion of the Armistice of Mudros on October 30, 1918. According to the verdict of July 5, 1919, the leaders of the "Unity and Progress" party and representatives of the Turkish authorities Talaat, Enver, Nazim, Jemal, Behaeddin Shakir and others were accused of involving Turkey in the war, deporting Armenians and

organizing genocide and were sentenced to death in absentia. Punitive acts were also committed against traitors-Armenians. Operation “"Nemesis” remained incomplete.

Armenian newspapers of Constantinople presented the members of “Nemesis” as heroes who carried out the death sentences of the organizers and accomplices of the Armenian Genocide.

*Mariam Hovsepyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Department of History of Armenian Periodicals and Public Mind of the Institute of History of NAS RA. Scientific interests:history of the Armenian social and political thought and periodical press, Armenian Genocide, Armenian Question. Author of 4 books, 1 study guide, and more than 50 articles. mariamhovsepian@mail.ru*